ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/148

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.09.2019թ. թիվ 01.1/26-1/14607-2019 գրությամբ «Զանգված» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.08.2019թ. թիվ 0216.4/5123-2019 գրության հիման վրա, 02.09.2019թ. թիվ 01.1/26-1/14607-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Զանգված» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Զանգված» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Զանգված» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/148 ընթացակարգի շրջանակներում 09.09.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է. որ «Զանգված» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով ընթացակարգին և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Այնուհետև Ընկերությունը ծանուցվել է ներկայացնելու որակավորումը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Ընկերությունը նշված փաստաթղթերը ներկայացրել է օգոստոսի 23-ին ժամը 18:23 և 18:25, մինչդեռ գնահատող հանձնաժողովի կողմից վերջինիս հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերությունը փաստաթղթերը ներկայացրել է սահմանված ժամկետի խախտմամբ, այն է՝ պետք է ներկայացներ օգոստոսի 23-ին ժամը 18:00-ին, մինչդեռ ներկայացրել է օգոստոսի 23-ին ժամը 18:23 և 18:25:

Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Զանգված» ՍՊԸ-ին ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընկերությունը պատշաճ կերպով կատարել է փաստաթղթերը ուղարկելու պարտականությունը:

3. **<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.08.2019թ. թիվ 0216.4/5123-2019 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի հուլիսի 26-ին հայտարարված ՀՀ ՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի և Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով մասնակցության հայտ է ներկայացրել և առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Զանգված» ՍՊԸ-ն, որին առաջարկվել է ծանուցման օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը նշված փաստաթղթերը ներկայացրել է հրավերով սահմանված ժամկետի խախտմամբ (վերջնաժամկետը 2019 թվականի օգոստոսի 23-ին ժամը 18:00-ն է, փաստաթղթերը ներկայացվել են 2019 թվականի օգոստոսի 23-ին 18:23 և 18:25):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն Ընկերության հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/148 ընթացակարգի շրջանակներում 09.09.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/148 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի և Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ ՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Զանգված» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 14-րդ չափաբաժնի մասով «Զանգված» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, որին 20.08.2019թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.08.2019թ. նիստի թիվ 3-1 արձանագրությամբ կայացված որոշմամբ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս ծանուցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ հրավերով սահմանված ժամկետում, որակավորման փաստաղթղերը (ծանուցումն ուղարկելու օրվանից մինչև 23.08.2019թ. ժամը 18:00) ընդհանրապես չի ներկայացրել (23.08.2019թ. Ընկերության

կողմից ներկայացվել են թվով 2 էլեկտրոնային փաթեթներ, համապատասխանաբար ժամը 18:23-ին, 18:25-ին):

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.09.2019թ. թիվ 01.1/26-1/14607-2019 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 30.08.2019թ. թիվ 0216.4/5123-201գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը եկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի,

ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի և Դիլիջան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ ՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Զանգված» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.08.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 14-րդ չափաբաժնի մասով «Զանգված» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«Զանգված» ՍՊԸ-ն ***20.08.2019թ.*** ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.08.2019թ. նիստի թիվ 3-1 արձանագրությամբ կայացված որոշմամբ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս ծանուցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ հրավերով սահմանված ժամկետում, որակավորման փաստաղթղերը (ծանուցումն ուղարկելու օրվանից մինչև 23.08.2019թ. ժամը 18:00) ընդհանրապես չի ներկայացրել (23.08.2019թ. Ընկերության կողմից ներկայացվել են թվով 2 էլեկտրոնային փաթեթներ, համապատասխանաբար՝ ժամը 18:23-ին, 18:25-ին):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ ***առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում***»:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը, արձանագրում եմ հետևյալը.

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը եկտրոնային փոստի միջոցով ***ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը***, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: ***Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից 23.04.2019թ. ժամը 18:23-ին և 18:23-ին հանձնաժողովի քարտուղարի (tender2@minurban.am) էլեկտրոնային հասցեին է ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ***եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն*** կապի կազմակերպությանը ***հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:***

Վերոգրյալով պայմանավորված արձանագրում եմ, որ «Զանգված» ՍՊԸ-ն 20.08.2019թ. ծանուցվելով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***երեք աշխատանքային օրվա*** ընթացքում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 02.09.2019թ. թիվ 01.1/26-1/14607-2019 գրությամբ «Զանգված» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**